

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՂԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 33

1898 ՆՈՅԵՄԲԵՐ 4

Ամեն Տեղի համար Տարեկան կանխիկ 50 դանեկան, վեցամսեայ 26 իսկ եռամսեայ, 13 դանեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթատարի ծախքը եւ արտոնագրերի կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուէի տեղ 105 դրուէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պաշտօնական հրամանագրեր:

Հանրագիտակի նկատմամբ Բաղմովէյ Հանդէսի կարծիքները:

ՏԲ. Յ. ՍԱՆՏԱՆՔԵԱՆ. — Կնոջ գերը առողջապահութեան մէջ:

Ղ. ԲՈՂԱՏ — Ճարտարարուեստական. — Տուրիերու մէջ սննդեղէնները պահելու միջոց:

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ. — Պարտիզականական. — Փենուեայի եւ Բամելիայի մշակութիւնը:

Ղ. ԲՈՂԱՏ. — Գիտնախնձոր եւ իր մշակութիւնը:

Ղ. ԲՈՂԱՏ — Շերամաբուժական:

Ղ. ԲՈՂԱՏ. — Արհեստական գիտելիքներ:

Ղ. ԲՈՂԱՏ. — Հարցում Արապկիրէ եւ պատասխան:

ՍՐԱՔՍ. — Առտնին տնտեսականը. — Անուշները պահպանելու եղանակ:

Թղթակցութիւնը, Ազգ. Էն:

Տ. ՊՈՋԱՃԵԱՆ — Գիտական խնդիրներ:

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՏԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ. Արի ճառարէսի, Թիւ 4

«Հանրագիտակ»ի 30րդ թիւով մագալան քառակուսիին ինչ լինելը համառօտակի բացարեցինք, և երեք օրինակներ ներկայեցինք $3 \times 3 = 9$, $5 \times 5 = 25$, $9 \times 9 = 81$ խորշերով, ինչպէս յայտնի կերեւի 9, 25, 81 տարազոյգ թիւեր են: Փափաք յայտնողներ եղան որ զոյգ թիւերով ինչպէս 16, 36, 64, 100 խորշերով քառակուսիներ ալ ներկայեմք. որովհետեւ թերթի անձկութիւնը չի ներեր որ ամենն ալ դնեմք, այսօր միայն $4 \times 4 = 16$ և $6 \times 6 = 36$ խորշերով կը դնեմք:

Ահաւասիկ հետեւեալն ունի իւրաքանչիւր տողն կամ սիւնակն 4ական խորշ, ընդամենն 16 հատ, և 1էն մինչև 16 թիւերն գրուած են, և ամեն կողմէն գումարն 34 կ'ելլէ:

9	16	5	4
6	3	10	15
12	13	8	1
7	2	11	14

Հետեւեալն ալ մինչև 36 թիւերն կը բովանդակէ և գումարն 111 կ'ելլէ:

31	32	4	1	21	22
29	30	3	2	23	24
12	10	17	18	28	26
11	9	19	20	27	25
15	16	33	36	5	6
13	14	35	34	7	8

Գումարելէ առաջ գիտնալու համար թէ քառակուսի մը գումարն ամեն կողմէն քանի՞ պիտի ելլէ, պէտք է մէկ տողին կամ սիւնակին խորշերն քանի օր են՝ խորանարդել, նոյն թիւն ալ վրան գումարել և գումարը 2ով բաժնել:

Մէկ կողմը

$$3 \text{ խորշ ունեցողը՝ կ'ունենայ } \frac{3+3^3}{2} = 15 \text{ գումար,}$$

$$4 \text{ » » » } \frac{4+4^3}{2} = 34 \text{ »}$$

$$5 \text{ » » » } \frac{5+5^3}{2} = 65 \text{ »}$$

$$6 \text{ » » » } \frac{6+6^3}{2} = 111 \text{ »}$$

եւայլն:

Այսօր՝ 1898 Հոկտեմբեր 31՝ Շարաթ է. 1825 Հոկտեմբեր 31 ին ինչ օր էր:

ԼՈՒՅՈՒՄ ԹԻԻ 18 ՀԱՆՆԵԼՈՒԿԻ

Կարծեմ լուծեցի, խնդիրդ Հերմիէն,
Պիտի բացատրեմք. քիչիկ մը սպասէ.
Երկու երրորդս կազմուի գեղ.
Շատ զխրութեամբ դու բոլոր մեզ
Եթէ գիտնաս թէ ինչ կազմին
Երբ աս գիշեր հաւատար են.
Արդ ես գիտեմ, կազմին մի օր,
Եւ երկու օր շինեն «օրօր».
Աւելցնեմ ես ալ մի «ոց»,
Հընչումըն ճիշդ կենդանւոյն օձ
Կեանք վրտանգող ու ահարկու.
Յարմարեցում, ո՞վ խնդրարկու.
«Օրօրոց» է ամբողջութիւն.
Դիմեցի ես դէպ մանկութիւն,
Յիշատակ քաղցր ու փարեկի
Ամէն մանկանց շատ սիրելի:

Այսօրն

ՋԱՊԷԼ Յ. ԿԱԶՆՆԱՆ

* *

Իմ մանկութեան օրերուն
Մի վայրկեան անդրադարձայ
Իմ դողդոջուն քայլերուն
Տակ գըեղ նախ ես տեսայ,
Ո՞վ դու սիրուն երեւուն
«Օրօրոց չե՞ս, տես գտայ:

Վերջին վանկդ ոչ գրով
Այլ թէ հնչմամբ ինձ փարի
Այն զատ «ոց» օձըն իւր թիւնով
Թէ եւ խայթել կը կամի
Բայց մայրիկին օրօրով
Իսկոյն աղչեալ կը փախի:

Էրզրում

ՆԵՔՏԱՐ Ա. ԳԵՐՁԱԿԵԱՆ

* *

Լուծած են նաեւ հետեւեալները.
Օր. Պ. Պ. Պ. — Տեարք, Յ. Շէլէֆետն
— Յ. Արայհեան, — Ե. Յ. Էթմէքեան,
արձակ. իսկ Գ. Պ. 2. և Գ. Ունճեան եւ
Ս. Գ. Քէչէճեան ոտանաւորով. տեղոյ
անձկութեան պատճառաւ այս վերջինները
չի կրցանք հրատարակել:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԴՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 33

1898 ՀՈԿՏԵՄԲԵՐ 31

ՏՊԱԴՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ

ԵՐԿՈՒ ՊԱՇՏՈՆԱԳՐԵՐԸ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ Տպագրական Տեսչութեան կողմէ հետեւեալ երկու պաշտօնագրերը ստացած է.

Պատճէն առաջին պաշտօնագրին

«Էրմէնիճէ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կազմեալ մուշակաւուր էմր ու թէնպին հարաքէթէ ճիւրաթ էյլէմէսինէ մէպնի, պու կիւնտէն իթիպարէն թաթիլ գըլընմըլ տըր:»

11 Հոկտ. 1898

Պատճէն երկրորդ պաշտօնագրին

«Կէջնտէ պիլա միւտտէթ թաթիլ գըլընմըլ օլան էրմէնիճէ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ չկաղէթաւընըն մաթպուլաթ նիզամնամէսի իլէ մաթպուլաթ հագգընտա ճարի օլան ուսուլ ու գաւախտէ ռայէթ էյլէմէք իւզրէ քէմաքեան նէշըրինէ մէէգուն պուլընտըղընը միւպէյին իշպու ըուխսաթնամէ սահիպը իմթիյազը Արմէն Լուսինեան էֆէնտիէ իթա գըլընտը:»

Կնիք Տպագր. տեսչութեան

27 Հոկտ. 1898

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Վենետիկի բաղմարդիւն Ուխտին ԲԱԶՄԱՎէՊ օգտաշատ Հանդէսը՝ իր սեպտ. ամսաթուոյն «Հանդէս Հանդիսից» բաժնին մէջ հետեւեալ կարծիքները յայտնած է Հանրագիտակի նկատմամբ:

«Հանրագիտակը իւր արդի սլարունակած յօդուածներովն ամենօգտակար է Հայ գիտնականաց, մանաւանդ երկրագործաց: Սորա խմբագրապետն (Պ. Ղ. Բոլատ) Ազգ. գրականութեան զարգանալուն առաւելապէս նպաստաւորած պիտի ըլլայ, եթէ իւր թերթին անուան հաւատարիմ մնալով, չըլլայ միայն երկրագործին ծարաւը անցնող, այլ նաեւ բնագիտին, քիմիագէտին, մեքենագէտին, արհեստաւորին, եւայլն, «օգտակար եղող հացի խնդրով զբաղող յօդուածներ» գրող: Այս յիշեալ դասակարգաց համար սոյն թերթին մէջ կրնան մուտք գտնել իւրաքանչիւրին մասնաճիւղի վերաբերեալ յօդուածներ՝ փոխանակ «գուարճալիք, բառարան, եւայլն», վերնագրով յօդուածոց, զորն այդպիսի «գիտական» թերթէ մի դուրս ալ կրնայ ոք գտնել, երկրորդակարգ թերթից մէջ:

Հանրագիտակի (1898 յուլիս 18) թերթին մէջ Պ. Խմբագրատեան «Գաւառացի բաժանորդներուն» ուղղած «հրաւերովն» կը տեսնուի, թէ զուտ փափաք մ'ունի ազգութեան մէջ գիտութիւնը ժողովրդեան դիւրահասկնալի եւ շահաւոր ընել, եւ միանգամայն մէն մի հայաբնակ աշխարհներու մէջ կղզիացեալ որ եւ իցէ ուսումնական դիւտերը տարածել եւ պարզել հայ հասարակութեան առջեւ: Իւր վերոյիշեալ «հրաւեր»ին մէջ կը գրէ: «Ներկայ վեցամսէն սկսեալ, Հանրագիտակի մէջ գործածուած գիտական, արհեստական եւ գրական բառերու բացորոշ մեկնութիւնները տուող բառարան մը պիտի հրատարակենք, անոնց գաւառաբարբառներն ալ քովերին նշանակելով, որպէս զի՝ ամեն գաւառացի հայու հաւասարապէս հասկանալի ըլլայ ՀԱՆՐԱԳԻՏԱԿի լեզուն, եւ այսպէսով իւր պարունակութիւններէն օգտուին»: Պ. Բոլատի այս ձեռնարկած աշխատութիւնն, եթէ գործադրուի, շատ լոյս պիտի սփռէ վերջնադարեան նախնեաց աշխարհիկ լեզուով գրուած՝ մութ բժշկարաններու եւ ասոնց նման գրուածոց էջերուն վրայ: Բայց գործադրուելու համար՝ Պ. Բոլատի ոչ միայն իր բաժանորդք պէտք են թիկունք ըլլալ, այլ եւ ամենայն բանասէրք (իրենց հաւաքած կամ գիտցած գաւառական բառերը ու եւ իցէ ազգային թերթի մը մէջ հրատարակելով կամ առ յիշեալ Խմբ. խաւրելով), որք սիրող են «Հայ գրականութեան յառաջադիմութեան»:

Բաղմամբէս հանդիսի վերոյիշեալ դիտողութիւններն շատ իրաւացի կը գտնենք. եւ արդէն՝ երբ մենք այս թերթի խմբագրութիւնը ստանձնեցինք, նպատակնիս էր մի միայն գիտութիւնները ռամկացնել, գիտական եւ արհեստական սկզբունքները ծանօթացնել ժողովուրդին, եւ մեր երկրի արհեստաւորաց իւրաքանչիւրի մասնաճիւղին վերաբերեալ կարգ մը արհեստական գաղտնիքներն պարզել եւ այսպէսով միշտ հացի խընդոյն շուրջը դեգերիլ: Բայց թէ ինչո՞ւ չենք կրցած ցարդ մեր այս սկզբունքը ճշդապէս գործադրել, ահաւասիկ:


Կը գտնուինք այնպիսի ժողովուրդի մը մէջ, ուր՝ չըսեմ ընթերցասիրութիւնը, այլ աւելի մասնաւորելով, թերթ կարդալու ստուրբութիւնը գոհացուցիչ վիճակի մը մէջ չի

գտնուիր: Շատեր կը գանգատին եւ կը տըրտնջան, թէ մեր մէջ գիտութիւններու եւ արհեստներու վրայ խօսող թերթեր չունինք եւ երբ այսպիսիները մօտիկ ընելու հարկին մէջ գտնուիք, կը փորձուիք, մարդասիրական պարտք մը կատարած ըլլալու փափաքով ձեռնարկ մ'ընել, բայց շատ շուտ կը հասկընաք խարուած ըլլալնիդ. վասնզի այդպիսիներն արդէն ժողովուրդին մէկ հազուագիւտ դասը կը կազմեն, որոց թիւը շատ հեռի կը մնայ թերթին յարատեւութիւնը ապահովելէ:

Ձեռնարկութեան սկիզբէն ի վեր ամեն ջանք ի գործ գրած էի սկզբունքիս հաւատարիմ մնալ. բայց մեր կամքէն անկախ շատ մը պարագաներու հանդէպ, պարտաւորած ենք պահ մը տեղի տալ նաեւ մեր բաժանորդներէ շատերու պահանջմանց առջեւ ալ: Մասնաւորապէս մեր գաւառացի բաժանորդներէ շատեր կը փափաքին որ, թերթս փոխանակ գիտական եւ արհեստական չոր ու ցամաք յօդուածներով խճողելու, փոխանակ հացի խնդրոյն լուծուիմը դիւրացնող օգտակար տեսութիւններով զբաղելու, աւելի դեգերի վերացական գրութիւններու շուրջը, պարունակէ միանգամայն ծիծաղաշարժ սրաբանութիւններ, քաղ. ազգ. եւն. եւն. լուրեր: Ի՞նչ կրնայինք ընել այսպիսի պահանջումներու հանդէպ. եթէ շարունակել փորձէնք մեր ուղղութիւնը, շատ հաւանական է որ բաժանորդաց նուազութեան պատճառաւ, թերթիս յարատեւութիւնը վտանգի տակ դրած պիտի ըլլայինք, ռստի լաւ համարեցինք ժամանակ մը համակերպիլ անոնց պահանջումներուն, եւ հեազհետէ վարժեցնել զիրենք դրական եւ օգտակար գրութիւններու ընթերցման: Եւ արդէն ինչպէս կը տեսնուի, հետզհետէ թերթս մաքրելով այդ անյարմար պարունակութիւններէն, կը մօտենանք կամայ կամաց մեր սկզբունքին:

Իսկ գալով մեր այն ձեռնարկին, որով կը փափաքէինք գիտական, արհեստական եւ գրական բառերու բացորոշ մեկնութիւնները տուող բառարան մը հրատարակել Հանրագիտակի մէջ, մենք միշտ պատրաստ ենք իրագործելու, բայց մեր հրաւերը տակաւին անլսելի մնացած է, եւ հապիւ թէ երկու թըրթակիցներ, որոց մին՝ Արաբկիրէն Գաղիկ է՝ Գէնտի Տէվէճեան, իսկ միւսը՝ Գեղամ էֆ.

Ունենան Մանիսայէն, պատասխանած են, մանուսայագործութեան վերաբերեալ յօդուածներով: Եթէ երբէք բանասէրներ փոփաքին ձեռնուռ գտնուիլ մեզ, մեր այս ձեռնարկը գլուխ հանելու համար, այսօր իսկ կրնանք սկսիլ այդ բառարանի հրատարակութեան, մինչեւ իսկ՝ եթէ առայժմ Հանրաքիտակի մէջ հրատարակուած 3—4 գաւառաբարբառներն ձեռքերնուս մէջ ունենանք:



ԿՆՈՋ ԴԵՐԸ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Մինչեւ ցարդ մեր գրած բոլոր առողջաբանականները կը պատկանին ոչ միայն արանց, այլ և կանանց: Սակայն այս անգամ մասնաւորելով խօսքս, պիտի ըսեմ թէ՛ կին մարդն ալ ունի իւր սեռին, վիճակին ու տարիքին պատկանող ողջապահական հրաժեշտ պայմաններն, մանաւանդ յղութեան տաղանապալից վիճակին մէջ: Բոլոր այս հիւանդութիւնները որոնք յատուկ են միայն կանանց, ծնունդ կ'առնուն շատ անգամ հակառողջապահիկ պայմաններու տակ ապրելու յոռի եղանակէն: Կինները՝ իրենց սեռին պատկանող ողջապահիկ պայմանները չ'զիտնալով զեղծումներու բազմակողմանի թերութիւններ կը գործեն և իրենց առողջութիւնը հիմնովին խանգարելու վտանգին կենթարկեն: Կինները շատ մը բաներու հոգն ստանձնած են, — ընտանեկան հոգը, զաւակներ ծնանիլ, խնամել և մեծցնելու գործը, տնական ու երբեմն գաշտային ամենածանր աշխատութեանց մասնակցութիւնը —, և ասոնց բոլորին մէջն ալ քիչ թէ շատ կրնան զեղծումներ գործել: Այսպիսի անդոյշ պարադայի մը մէջ, մեծամեծ վնասներու կենթարկեն իրենց մարմինը և մահացու հիւանդութիւններու ծնունդ տուող աղբիւր մը կը պատրաստեն, որ ըսել է «իրենց գերեզմանը ձեռքովին փորել»: ասոր համար է որ շատ մը կիններ ախտաժէտ են ու տկար վիճակ մ'ունին: Չմոռնամ ըսելու սակայն թէ՛ այս ամէն անպատե-

հութեանց առաջը կրնայ առնուիլ, երբ կինները իրենց սեռին ու վիճակին և տարիքին պատկանող առողջապահիկ միջոցները լիովին գործադրեն: Բարեկազմ ու առողջ կին մը շատ անգամ կը տեսնենք որ, գիտակից լինելով ողջապահիկ պայմաններուն, միշտ առողջ կը մնայ և շատ քիչ անգամ կը հիւանդանայ:

Այն կինները որոնք ջղային են և որոց վրայ ջղային այս կամ այն տկարութիւնը կը տիրէ, ամենէ աւելի պէտք ունին ողջապահիկ միջոցներու, հակառակ պարագային մէջ ջղային եղանակները թող չ'փափաքին ամուսնանալ, քանի որ իրենց խառնուածքը ու վիճակը արդեւք մ'է ճշմարիտ մայրութեան կոչումը ունենալուն: (Այնպիսի կիններ պէտք ունին հանգիստ ընելու իրենց տուններուն մէջ): Այսպէս է նաեւ աւշային կիններուն համար, — աւշային կին մը պէտք է որ հպատակի ողջապահիկ անհրաժեշտ պայմաններուն և ինչպէս ըսինք, պէտք է զգոյշ կենալ բոլոր այն բաներէն, որոնք կրնան վնասել իր ընդհանուր առողջութեան: Տկար կիներ ամուսնանալով շատ ատեն տկար զաւակներ կ'ունենան և տկար սերունդ մը պատրաստելու պատճառ կ'ըլլան: Ասոր հակառակ բարեկազմ կին մը որ ճշմարտապէս մայր կոչուելու արժանիքն կրնայ վայելել, միշտ առողջ ու կայտառ զաւակներ կ'ունենայ: — բարեկազմ կին մը չէ կարելի ամուլ մնալ և սակայն բարեկազմ ու առողջ մարդու մը հետ ամուսնանալով բացառաբար շատ տարիներ վերջը զաւակ ունենալու բաղդին արժանանալ և գուցէ երբեմն ալ անպաւակ կրնայ մնալ: — առաջինը ինչպէս ըսինք բացառութիւն կրնայ համարուիլ, իսկ երկրորդը, ամուլութեան նշան մ'է երկուքէ միոյն յատուկ: Երբ այսօր մեր շուրջը կը տեսնենք տկար զաւակներու երամ մը և միանգամայն տկար ու ախտաժէտ սերունդ մը, վատառողջ և տկարակազմ մայրերու պատուհներ են անոնք:

Այն կինը որ մայրութեան կոչուած է և այն կինը որ պիտի ունենայ յղութեան

ծննդաբերութեան վիճակ մ'ալ, անշուշտ պէտք ունի առողջապահիկ կենսական պայմաններուն, մանաւանդ այն կինը՝ որ չափ կանուխէն ամուսնացած է: Կիններէ շատեր, գիտնալով հանդերձ յղութեան ժամանակամիջոցին մէջ առողջապահիկ պայմաններու կարեւորութիւնը, բայց և այնպէս անխոհեմ ընթացքներով զեղծումներ կը գործեն ու կ'եղծանեն իրենց առողջութիւն և կը վտանգեն իրենց մարմինը: Կան փորձառու կիներ ալ (բաղդատարար շատ քիչ), որոնք խիստ զգուշութիւն ձեռք կ'առնուն և դեռ զաւակ չ'ծնած, պատրաստ կը գտնուին ամէն պատահականութեանց դէմ, և յղութեան սկզբնաւորութենէն մինչ ցվերջ պատահած զրկանքներուն ու տառապանքներուն ամենամեծ զգուշութեամբ կը դիմագրեն ու այն ամէն միջոցները որոնք շատ անգամ կը գործածուին առանց բժիշկին կամ փորձառու դայակի մը հարցնելու, ի գործ կը դնեն կատարելապէս, թէ իրենց և թէ ծնելիք մանկանց առողջութեանը համար: Հոստեղ մէջ բերենք նաեւ թէ, շատ ատեն ուժեղ և առողջ կին մը, յղութեան վիճակին մէջ, կարելի եղածին չափ իր կալմին ու առողջութեան հետ վերաբերութիւն ունեցող վիճակ մը կ'ընարէ, ասիկայ ահաւաստիկ, առողջապահական պայմաններուն առաջինն ու լաւագոյնն է: Երանի՜ թէ սակայն մեր բոլոր կիներն ալ այսպէս զգոյշ կենային. — Այն բոլոր փաստաբեր պատճառները՝ որոնք կը ահանուին շատ մը կիներու վրայ և կ'ազդեն իրենց ծնելիք զաւակներուն ալ, գլխաւորաբար անզգոյշ ընթացքէ մը և պէտք եղած խնամոց պակասութենէն կախում ունի: Այսինքն՝ բնակարանի, հագուստի, սնունդի, եւայլն մասին գործուած թերութիւններն և անզգուշութիւններն են որ, կնոջ մը հիւանդութեան պատճառներն երեւան կը բերեն:

Հոստեղ պէտք է որ ցոյց տանք այն ամէն զգուշաւոր միջոցները և նաեւ առողջապահիկ ամենակարեւոր ու կենսական միջոցները:

Ա. Բնակարանին մէջ գետնայարկի սենեակները, որոնք ընդհանրապէս մութ ու խոնաւ կ'ըլլան՝ փաստաբար են, այն կիներուն, որոնք մանաւանդ յղութեան վիճակ մ'ունին. — Եթէ ընտրութեան մասին նախազգուշութիւն ըլլայ վտանգներէն մին պակասած կ'ըլլայ:

Բ. Ամէն ոք գիտէ թէ կիները չափազանց զգայնոտ կ'ըլլան, ասիկայ արդիւնք է իրենց շիղերուն զօրաւոր զգայնութիւն ունենալուն, սաստիկ յուզում, բարկութիւն, կիրք, երկիւղ, չարաչար աշխատութիւն (մտաւոր ըլլայ թէ մարմնաւոր) կը փաստեն կիներուն: Եթէ իրենց բնութիւնը, գիրքը, կացութիւնը և միջավայրին պահանջումը չեն ներեր որ այդ պայմանները լիովին գործադրուին, այն ատեն գոնէ իրենց մարմինը հիմնովին վտանգի մէջ չդնելու համար, կարելի ու կարեւոր եղածին չափ պէտք է որ հպատակին առողջապահիկ կենսական պայմաններուն:

Գ. Անկանոն և անբաւական սննդաւորութիւնը կը փաստէ իրենց առողջութեան և սովորաբար, յղութեան ժամանակ կերակուրներու կարգը կանոնը և որակը փոխել ընդհանուր սովորութեան կարգ անցած է: Դժուարամարտութիւն, ստամոքսային և միւս մարսողական գործարաններու յատուկ զոնազան կարգի տկարութիւններ կը պատճառէ:

Դ. Ծանր մարմիններ դեանէն վերցընել, բարձր տեղէ մը վար առնել և կամ մէկ տեղէն միւսը տանիլ, ցատկել, պարել, ձի հեծնալ, ասոնք բոլորն ալ կը փաստեն կիներուն, մանաւանդ յղութեան վիճակին մէջ: Յղութեան և ծննդաբերութեան սաստիկ ցաւեր (երկունք) դժուարածնութիւն, վիժում, արիւններթուլթիւն, որովայնի ներքին թաղանթի բորբոքում, ջղային տազնաւորներ, սննդական երեւոյթներ, և ուրիշ շատ մը մահաբեր հիւանդութիւններ կը պատճառեն:

Ե. Յղութեան ժամանակ լաճկոնակի գործածութիւնը և նորածնութեան աղետաբեր սովորութեան համեմատեալ

մեալ հաղուստներ հազնիլ և կամ կապանքներով կարծիքն ու որովայնին վրայ ճնշումներ ընելը, գլխաւորաբար վիժում և սաստիկ արիւնհոսութիւն կը պատճառեն: Դեռաւոր օրիորդներ, եթէ ականջ ունին թող աղէկ լսեն մեր ըսածները, — հասակնին նրբացնելու և գեղեցիկ ներկայելու համար, նորաձեւութեան ձեռքը գերի ըլլալով, շատ մը սովորութիւններու հետեւելէ զատ, սեղմիրանի և սեղմեալ հաղուստներու գործածութեան կը հետեւին —, թէ՛ որքան կը փառասին, և թէ՛ քանիներ արդէն փառասած են, եթէ շատեր ալ կան, որոնք թոքախտէ (վէրէմ) և ստամոքսային զանազան կարգի անբուժելի հիւանդութիւններէ կը տառապին բաճկոնակի գործածութիւնն է պատճառ: Հետեւաբար երբ կին մը յղի է այն ատեն երկիւղ, յուզում, կիրք ազդող բոլոր պատճառներէ հեռի կենալու է, մանաւանդ յարմար բնակարանի մը ընտրութիւնը, հաղուստի և սնունդի ընտրութեանը կարելի եղածին չափ հոգ տանելու է: Անհրաժեշտ կարեւոր է իւր շարժումները և աշխատութիւնները մեղմել ու չափաւորել: Կարեւոր է նաեւ մարզել մարմինը երբեմնի թեթեւ շարժումներ ընելով: Յղի կանանց համար առողջապահական էական պայմաններէն մին է առօրեայ սնունդի քանակը և որակը չփոխել և առանց խաբուելու երբեմն պատահած սաստիկ խորթակին, պէտք է դիմադրել և կամ ըստ կարելոյն քիչ ուտել: Անկողնոյ հանդիստը ու երկարատեւ քունը շատ բարեյաջող աղբեցութիւն մը կը ներգործէ յղի կիններուն, և մանաւանդ ծննդաբեր կանանց կազմին վրայ:

Յաւայի է ըսել թէ, մեր կինները ամենէ աւելի տգէտ և անտեղեակ դայեակներու ձեռքէն է որ կը փառասին, շատ մը նորատի կանանց վրայ տեսնուած կանացի տկարութեանց իսկական պատճառը, յղութեան միջոցին և կամ ծննդաբերութեան ժամանակ ու վերջը դայեակներու ձեռամբ գործուած ամենամեծ վնասներն և թերութիւններն են: Մանկաբարձ կինը (աչքդ գոցէ դայեակ բռնէ) յղութեան վերջին օրերուն և կամ ծննդաբերութենէն մի քանի օր վերջը ի գործ դրուելիք նախազգուշական ամենահարկաւոր միջոցներու հակառակ, ձեռք առած փառասներ միջոցներով, ծննդաբեր կնոջ կացութիւնը հիմնովին վստանդի

մէջ կը ձգէ, և անոր առողջութեան ներդաշնակութիւնը մասամբ իւր կեղծանէ: Երբեմն որդեծին կնոջ շուրջը խումբ մը խռոված պառաւներ ու ռամիկ կիներ հաւաքուելով, մանկաբարձ կինն ալ հոն իր ներկայութեամբը փայլելով հանդերձ, — անհեթեթ ու այլանդակ միջոցներով կուզեն խնամել զանի, ի միջի այլոց դեղեր ալ պատրաստելով, զայնս ուտել կը յանձնարարեն, առանց երբեք գիտնալու թէ՛ որքան վնասաբեր կրնայ ըլլալ այդ ըրածնին —, խեղճ որդեծին կնոջ վիճակը աւելի եւս ծանրանալով, մահացու հիւանդութիւններու ծնունդ կուտայ, և եթէ շատեր ալ կան, որոնք կը տառապին որովայնի ներքնաթաղանթի հիւանդութենէ ախոնդանութենէ (histérie), և տեղատեղութենէ, այս է պատճառը: Այսպիսի դժնդակ ու տաղնապալից պարագայի մը մէջ, պէտք է դիմել անմիջապէս ճարտար բժշկի մը, և կամ փորձառու դայեակի մը խնամոց:

Մաշեւա

ՏՕՔԹ. Յ. ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

ՀԱՐՏԱՐԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

ԹԻ ԻՆՉՊԵՍ ԿԵՐԱԿՐԵՂԵՆՆԵՐԸ ՏՈՒՓԵՐՈՒ ՄԷՋ ԿԸ ՊԱՀՆԵՆ

Պատասխան թիւ 42րդ հորցումին

(Հարմարութեան 7-րդ 11-32)

Հիմա տուփերու քանակութեան համեմատ «կրկանթ (bain-marie) կոչուած, մեծ կամ փոքր կաթսայ մը պէտք է երկաթեայ թիթեղէ (սաճ), ձուլածոյէ կամ պղինձէ շինուած, և վրան ալ խուփ (գալիաք) մը (*): Պահուելիք սնունդները կը լցնեն տուփերուն մէջ, բերնէն 1 հար. մէթր (սանթիմէթր) վար, բերանը կը գոցեն, աղէկ մը կը մաքրեն եզերքները, և մածոյցով (լէհիմ) կը զօդեն (լէհիմ ընել): Բայց հոս նկատողութեան առնելիք կէտ մը կայ. տուփերուն բերնի կափարիչ ըլլալիք կաոքները պարզ բոլորակներ ըլլալու են, առանց եզերքնին դարձած ըլլալու, տեղական թիթեղագործերը այս գործողութեան «լոնճա ընել» կ'ըսեն. իսկ տուփերու բերնի եզերքները պէտք է «կէս գօտ» եղած ըլլան առաջուց: Այս վերջի գոր-

(*) Տուփերու մէջ, սովորական կաթսաները և սաները անդամ կարելի է գործածել:

ծողութեան համար յատուկ «գօուտօն»ի մեքենաներ կան թէեւ, բայց քիչ քանակութեան համար ձեռքով ալ կ'ըլլայ «լօնճայ»ի կամ «ինքնաթիւ»ի վրայ: Այս բաները զոր կը գործածենք ստիպեալ, անշուշտ արհեստէն տեղեկութիւն ունեցող թիթեղագործերը կրնան հասկնալ, և փափաքողները անոնցմէ պէտք է բացատրութիւն խնդրեն:

Վերայիշեալ գործողութիւնով, տուփերուն բերանը գրեթէ (կ) գրի ձեւը կ'առնու: Տուփերը եռացած սօտաջուրի մէջ աղէկ մը կը լուան, կը մաքրեն, և կը չորցնեն. յետոյ պահածոնները չի պաղած կը լեցնեն անոնց մէջ, կափարիչը (կ)ին մէջքին վրայ կը դետեղեն, և (կ)ին վերի ծայրն ալ մուրճով մը վրան դարձնելէ վերջ, խնամով կը փակցնեն սյլ եւս եզերքները, երբ տակաւին գաղջ վիճակի մէջ են պահածոնները: Պահածոններու նախնական պատրաստութիւնները սկիտի բացատրենք հետզհետէ, իւրաքանչիւրի տեսակին համեմատ:

Տուփերը այսպէս պատրաստուելէն անմիջապէս վերջը, կը շարեն «կրկանօթ» կոչուած կաթնաներուն մէջ, որոց վրայ խօսեցանք վերը: Կրկանօթին մէջ ջուր լեցուած է առաջուց. բայց այնչափ՝ որ տուփերը մէջը շարեւէն վերջը, ջուրը անոնց եզերքէն 1 հար. մէթրի չափ վար մնայ: Կրկանօթին տակ կըրակը վառելով, աստիճանաբար կը տաքցնեն, մինչեւ որ եռալ սկսի: Կրկանօթի ազդեցութիւնը ջուրը եռալու սկսած ատեն կ'սկսի. և պահածոն տեսակին համեմատ քիչ կամ շատ կ'եռացնեն, ինչպէս պիտի տեսնենք: Կրկանօթին մէջի ջուրը տաքնալու սկսելէ առաջ, սրածայր դուրով (զըմպա) մը, տուփերու կափարիչին կեղրոնը գտնուած կարկինի (բերկել) կէտին վրայէն ծակ մը կը բանան լուցկիի փայտի խոշորութեամբ. և ահաւասիկ թէ ինչպէս. մասնաւոր գործաւոր մը ձախ ձեռքով սրածայր կէս մէթրի չափ երկայն դուրի մը ծայրը կը դնէ կափարիչին ճիշդ կեղրոնը, (կափարիչը փակուցած ատեննիդ ուշադրութիւն ընելու է որ, կարկինին չինած կէտին գոգաւոր կողմը երեւր գայ, որպէս զի ծակելու գործողութիւնը դիւրին ըլլայ) իսկ ալ ձեռքով բռնած մուրճով, իսկոյն չոր հարուած մը կ'իջեցնէ դուրին գըլխուն. երբ ծակը ծակուի, դուրը կը հանէ և հետզհետէ արագօրէն միւս տուփերու կա-

փարիչները կը ծակէ: Ոմանք ալ՝ այս ծակերը առաջուց կը ծակեն, երբ տակաւին տուփերը կաթնային մէջ դրած չեն, որ ըստ մեզ ամենէն դիւրին աղէկ և ապահով միջոցն է:

Կրկանօթներու մէջի ջուրը եռալ սկսած ատեն, անշուշտ տուփերու մէջի պահածոններն ալ հետ մէկտեղ կ'սկսին եռալ. ուրկէ գոյացած շոգին տուփերու վերի կողմը գըտնուած օղը դուրս մղելով, կը գրաւէ այդ օղին բռնած տեղը, և օղն ալ կափարիչի կեղրոնի ծակէն դուրս կը ցնդի. որով և կրկնակի ստերջացում մը յառաջ կուգայ. այսինքն՝ տաքութեամբ պահածոններու մէջ գտնուած նեխիչ մանրէներու սերմերը կ'ոչընչանան նախ. և մանրէներով վարակուել օղը, որ թէեւ ստերջացած է տաքութեամբ, բայց տուփին դուրս ելլելով, բոլորովին պահածոնները զերծ կը մնան անոնց վնասակար ազդեցութիւններէն:

Դ. ԲՈՒԱՏ

(ԴՐՈՒՆԻՒՄ)

ՊԱՐՏԻԶՊԱՆԱԿԱՆ

ՓԵՆՈՒՆԱՅ

(ՇԱՔԱՑԻՏ) ԵՒ ԻՒՐ ՄՇԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պատասխան թիւ 29 հարցման)

Փենունան կամ փեննան (*) (չաքայլատայը կիւլի=pivoine=Lup. paeonia), Գորտաբոյսերու, (renonculacées) ընտանիքէն բաղմամեայ տունկ մ'է՛ որ ունի ելունդի նման ուռած արմատներ, որոնցմէ կ'արձակուին սմէն տարի բազմաթիւ ընձիւղներ, որոնք իրենց ծայրը կը կրեն ծաղիկ մը:

Մաղիկը ունի «բաժակ» մը՝ որ կը բաղկանայ հինգ մնայուն բաժակաթերթերէ (sepales), պսակ մը (corolle), որ կը բաղկանայ հինգ թերթերէ (pétales), և մէջտեղը ունի բազմաթիւ (20—100) «առէջ»ներ (étamines), պտուղը կը բաղկանայ մի քանի «պարկուճ»ներէ (follicules):

Փենունան կը գտնուի բարեխառն կլիմաներու տակ, և կը բաղկանայ գրեթէ 20ի չափ տեսակներէ. ասոնցմէ մի քանիները շարունակաբար մշակելով, յառաջ եկած են բաղ-

(*) Ըստ Հ. Գարրիէլ վ. Մէնէվիշեանի (Բուսաբանութիւն) «Մեծածաղիկ» «Քաջվարդ» (Խաչափայտ՝ — քահանայատակ, — ճշնարտ): Մն. իմք.

մաթերթաւոր (գաթմէրլի) տեսակներ, որոնք կը ծառայեն պարտէզներու թաղարները զարդարելու :

Ծաղիկներուն համար մշակուած չորս գըլ-խաւոր տեսակ փենուռայ կայ .

1. «Բժշկական» կամ «Հասարակ փենուռայ» (Բիվուան օֆիսինալ) . որ ամենէն հին ճանչցուածն է իւր տեսակին մէջ, բազմամեայ բոյս մ'է, որ ամէն տարի էանաչեղէն ընծիւղներ կ'արձակէ, այս ընծիւղներու բարձրութիւնն է 50—60 սանթիմէթր :

Իւրաքանչիւր ընծիւղ իւր գագաթը կը կրէ միակ կարմրագոյն ծաղիկ մը, որ կը բացուի ապրիլ և մայիս ամիսներուն մէջ :

Մշակութեամբ և գերընտրութեամբ (սէլէքսիօն) այս տեսակներուն մէջ պէսպիսութիւններ յառաջ եկած են, որոնք կը կայանան գոյներու փոփոխման և ծաղիկներու մեծութեան մէջ . այս ծաղիկներն են կարմիր, ձերմակ, դեղին և վարդագոյն :

2. «Նորակերպ փենուռայ» (Բիվուան բառաօքսալ) . որուն տերեւները խորունկ կերպով կտրտուած են, տերեւներուն վրայի երեսը մաքուր կանաչ է, իսկ տակը խաժագոյն :

Ծաղիկները կարմիր են, որոնց վրայ կը գտնուին գիծեր, այս գծերը կը դեղնին երբ ծաղիկը թուով սկսի :

Հոս ալ մշակութեամբ և գերընտրութեամբ երկրորդական տեսակներ յառաջ եկած են, որոնց մէջ ո՛չ միայն ծաղիկն գոյնը կը տարբերի, այլ և ծաղիկն թերթերու ձեւը և դիրքը . թերթերէն ոմանք շատ կը մեծնան, իսկ ուրիշներ ալ շատ փոքր կը մնան :

3. «Զինական փենուռայ» . որ առաջիններէն կը տարբերի իր անոյշ հոտով և գոյնեւոր գանազանութեամբ, միեւնոյն ծաղիկը տարբեր տարբեր գոյներ ունի :

ՄՇԱԿՈՒԹԻԻՆ . — Պարտէզներու մէջ փենուռան կը մշակուի թաղարները զարդարելու համար, բայց իւր ծաղիկներուն կեանքը շատ կարճ է, շուտ կը թուամիս : Եթէ ածուի մէջ տնկէք, պէտք է որ իւրաքանչիւր ոտք իրարմէ 60—70 սանթիմէթր հեռաւորութիւն ունենայ : Գարնան ծաղիկներ ունենալու համար, պէտք է աշնան տնկել : Լաւ է երբեմն երբեմն ջրել լաւ ծաղիկներ ունենալու համար :

Երբ ծաղիկները բոլորովին թուամիս, կա-

րելի է բոլոր ընծիւղները կտրել, թեթեւ մը հողը հերկել, ու ուրիշ միամեայ ծաղիկներ ցանել փենուռայի արմատներուն առանց վնաս մը տալու :

Փենուռան կը բազմաճայ գլխաւորաբար ընծիւղներու բաժանումով, և այնքան չարքառ է որ, կը յարմարի բարեխառն կլիմաներու գրեթէ բոլոր հողերուն և դիրքերուն, բաւական է որ մշակութեան տեղը շատ շուք չըլլայ :

Հունտերով ալ կարելի է բազմացնել, երբ կուզենք նոր տեսակներ յառաջ բերել . ասոր համար պէտք է աշնան մէջ հունտերը ցանել ծաղկամաններու մէջ :

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ . — Փենուռան կը մշակուի պարտէզներու մէջ, գլխաւորաբար իր ծաղիկներուն համար . բայց իր արմատներն ալ բժշկական տեսակէտով կարեւորութիւն ունին, որովհետեւ անոնցմով կը պատրաստեն դեղեր : Հին մարդիկ մասնաւորաբար շատ մեծ հաւատք ունէին իւր բուժիչ յատկութեանց վրայ, այնպէս որ զայն կը նկատէին լուսինէն զրկուած աստուածային բոյս մը (?), որ գէշ ոգիները կը վանէր (! ! !), դժբաղդութիւնները կը հեռացնէր (! ! !), պայմանաւ որ՝ գիշերը ժողովուած ըլլար . . . Այս պարագային մէջ փենուռայի արմատէն պատրաստուած դեղերը «անպատճառ» կը բժշկէին օձի թունաւորումները, ամենէն ծանր վէրքերը և գլխաւորաբար վերնոտութիւն (սառա) :

ՄԱՌԱԿԵՐՊ ՓԵՆՈՒՆԱՆ . — Թուր մ'է որ բնիկ Զինաստանի մէջ կը գտնուի, բայց այժմ մեր կլիմաներու տակ կը մշակուի դարձեալ իւր զարդ : Տերեւները շատ մեծ են, ծաղիկները ճիւղերուն ծայրը կը գտնուին, բայց շատ մեծ են . վայրենի վիճակին մէջ ծաղիկները վարդագոյն են, բայց մշակութեամբ յառաջ եկած են կարմիր և սպիտակ ծաղիկներ ունեցող տեսակներ, որոնք կը ծաղկին ապրիլ ամսոյն մէջ :

Ծառակերպ փենուռան շատ չարքառ է բարեխառն կլիմաներու տակ, բաւական է որ՝ լաւ, կահուղ և քիչ մ'ալ խոնաւ հող գտնայ : Բազմացնելու համար կրնանք ղլմել ստեղնացումի (չէլիկ=պութիւն) կամ ձեղքուած արմատի մը բեկորին :



ՔԱՄԵԼԻԱ

ԵՒ

Ի Ի Ր Մ Շ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

(Պատասխան թիւ 33 հարցման)

Ա. Ա. Տիրատուրեան,

Բնիկ ճարտնի բոյս մ'է, զոր 1739ի «Քամելի անուն մէկը Եւրոպա բերաւ, ու անոր անուն իբր յիշատակ կը կոչուի Քամելիա. ինչքան ալ գեղեցիկ անուն, Աղեքսանդր Տիւմայի երեւակայած հերոսուհին իրաւամբ սիրահարած էր քամելեաներու:

Վայրի վիճակի մէջ ծաղիկները պարզ են ու փոքր, բայց մասնաւոր ինամքներէ ու մշակութիւններէ վերջ, կարելի եղած է բազմաթերթաւոր (գաթմէրի) տեսակներ յառաջ բերել, որոնց թիւը 700ը կ'անցնի:

Հազար ներքող ու գովեստ չեն բաւեր քամելիաի արժանիքը ցուցնելու համար. կարծես «մաղուած», զուտ կանաչ տերեւներուն քով կը գտնուին հիւսնալի ծաղիկներ, որոնք ծաղկած կը մնան ձմեռը ու գարնան մէջ. այս պատճառաւ կարելի է հասկնալ թէ ինչո՞ւ այս ծաղիկը այնքան յարգ գտած է ծաղկի «ամաղէօն»ներու և գեղեցիկը սիրողներու կողմէ:

ՄՇԱԿՈՒԹԻԻՆ. — Քամելիան լաւ կ'աճի թեթեւ և բարեբեր հողերու մէջ. աւազուտ հողերը մասնաւորաբար շատ կը յարմարին քամելիաի մշակութեան: Լաւ և երկարակեաց ծաղիկներ ունենալու համար, պէտք է որ տունկը քիչ մը շուք տեղ գտնուի, և կլիման միշտ միօրինակ ու մեղմ բարեխառնութիւն մ'ունենայ. ծովեզերեայ գաւառները շատ լաւ կը յարմարին քամելիաի մշակութեան, բաւական է որ շատ տաք չ'ըլլայ, որովհետեւ տաքութեան ազդեցութեամբ ծաղիկները շատ շուտ կը թոռմին: Յուրա երկիրներու մէջ կարելի է զայն մշակել ջերմոցներու մէջ, և կամ ծաղկամաններու մէջ տնկելով, գարնան ու ամառը բացօդեայ թողուլ պարտէզներու մէջ, իսկ աշնան և ձմեռը տան մէջ լուսաւոր տեղ մը պահպանել:

Քամելիան բազմացնելու համար, պարտէզներու մէջ ընդհանրապէս «պատուաստ»ի դիմում կ'ըլլայ, և կարելի է միեւնոյն ոտքին վրայ պատուաստել նոյն տեսակէն եղող տարբեր գոյներով քամելեաներ: Պէտք է պատուաստել բազմաթերթաւոր տեսակները պարզ

այսինքն վայրի քամելիաի ոտքի մը վրայ: Այս պարզ տեսակները կարելի է ունենալ հունտեր ցանկելով, բայց այս միջոցը գրեթէ չի գործածուիր, որովհետեւ շատ ժամանակի պէտք կայ և դժուար է լաւ հունտեր գտնալ: Այժմ այս տունկը բազմացնելու համար, ստեղծացում (չլիկ) կոչուած գործողութեան կը դիմեն. այսինքն՝ պարզ տեսակ քամելիայէն ձիւղ մը կը կտրենք, լաւ պատրաստուած թեթեւ հողի մը մէջ կը տնկենք, հոն խոնաւ հողին մէջ ձիւղը արմատներ կ'արձակէ գրեթէ տնկուած օրէն 6 շաբաթ վերջը: Երբ վստահ էք թէ արմատները կազմուած են, կրնաք անկից հանել ու ուզած տեղերնիդ տնկել, ու յաջորդ տարին անոր վրայ պատուաստել բազմաթերթաւոր քամելիաի տեսակ մը:

Կ'ըսէք թէ՝ «Անցեալ աշնան շատ կոկոն տուին, բայց շատ քիչերը ծաղիկ բացին, տեսակ մը հիւսնալութենէ բռնուեցան (կոկոնները դեղնեցան), և կամաց կամաց թափեցան բոլորն ալ»:

Շատ հաւանական է որ անցեալ աշնան սկիզբները մէկէն ի մէկ բաւական ցուրտ ըրաւ, ու ձեր քամելիաի կոկոնները սառեցան, որուն հետեւանքն կ'ըլլայ կոկոններու դեղնումը ու թափումը:

Որպէս զի՝ աշնան կամ ցուրտէն չ'մնասուին, պէտք է ձեր քամելիաները կամ ձմեռը թաղարներէ հանել ու ծաղկամաններու մէջ տնկել, և կամ միշտ ծաղկամաններու մէջ մշակէք. ու երբ աշունը գայ՝ ջերմոցի մը մէջ դնէք. իսկ եթէ ջերմոց չ'ունիք, լաւ լուսաւորուած սենեակի մը մէջ դրէք ու տաք օրերը պատուհանները բանալով օդը փոխեցէք: Այսպէսով կրնաք ամառ ձմեռ քամելիա ունենալ: Գալով ձեր ծաղիկները ուտող որդերուն, կարդացէք Բոլատ էֆ.ի «Պարտիզպանական կենդանարանութիւն» վերնագրով յօդուածները:

Սիւլիբի

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ

ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ՄՇԱԿՈՒԹԻԻՆԸ

(Շարունակութիւն 7-ի 1-ի 32)

ՏԱՇՏԱԹԱՂՈՎ, ՍՏԵՂՆԱՑՈՒՄՈՎ ԵՒ ԱԶ-ԳԵՐԸ ՏՆԿԵԼՈՎ ԲԱԶՄԱՑՈՒՄ. — Այս երեք միջոցներն ալ կը գործածուին երբեմն, գետնախնձորը բազմացնելու համար: Սովորական

կերպով գետնախնձորները կը տնկեն, և մը-
շակութեան խնամներն ալ կուտան. երբ ցո-
ղունները 30 հար. մէթրի չափ բարձրանան,
գետին կը ծռեն, և վրանին հողով կը ծած-
կեն, միայն ծայրերնին դուրս ձգելով: Այս
գործողութենէն ժամանակ մը վերջը, տե-
րեւներու անութէն նոր բողբոջներ կ'արձակ-
ուին և հողէն դուրս կ'ելլեն. որոնց իւրա-
քանջիւրը արմատաւորելով, նոր ելունդներ
յառաջ կը բերեն, և այս կերպով, բերքը թէ-
և կը շատնայ, բայց ձեռնաշխատութեան
ծախքը շատ ըլլալուն, գոյացած հասոյթը ան-
կարեւոր կը մնայ: Ուր որ օրականները ուժան
են, և ջրելու դիւրութիւն կայ, կամ մերթ-
ընդ մերթ անձրեւ կուգայ, կարելի է փոր-
ձել այս միջոցը, որ տաշտաթաղ (marcotte.
տալլորմա) կը կոչուի:

ՍՏԵՂՆԱՑՈՒՄ (bouture, չէլիկ). — Այս
միջոցով ալ գետնախնձորները կը բազմացը-
նեն, որ հետեւեալ կերպով կ'ըլլայ: Գետնա-
խնձորի ելունդները կը տնկեն ժամանակէն
չափ կանուխ, լաւ աղբուած հողի մէջ, և ի-
րարմէ 16—20 հար. մէթր հեռաւորութեամբ:
Քիչ ժամանակուան մէջ իւրաքանչիւր կ'ունդի
վրայէն 7—8 բողբոջ կ'արձակուի. և երբ այս
բողբոջները 8—10 հար. մէթր երկայնու-
թեան հասնին, գետնի երեսէն կը կտրեն, և
սովորական ստեղներու պէս կը տնկեն, ե-
լունդները հողին մէջ կը մնան, և այս
անգամ աւելի շատ բողբոջներ արձակելով,
նախորդներուն պէս կը կտրեն և կը տնկեն:
Եւ որովհետեւ այս ստեղները քիչ քանակու-
թեամբ խոշոր ելունդներ կ'արտադրեն, այս
պատճառաւ մէջտեղերնին շատ միջոց չեն
թողլոր, տեղ չի կորսնցնելու համար. որով և
կը գոհանան իրարմէ 25 հար. մէթր հեռու
տնկելով: Մ. Կասրառէնի ըսածին նայելով,
36 քառակուսի մէթր տարածութեամբ հողի
մը վրայ, իրարմէ 16 հար. մէթր հեռու տըն-
կուած գետնախնձորի ելունդները, մէկ ար-
տաւար տեղ տնկելու չափ բողբոջ կրնան յա-
ռաջ բերել. որով և ելունդները տնկելու սո-
վորական դրութեան չափ առատ բերք կ'ըս-
տացուի. և այս կերպով ալ իբր հնտացու
գործածուած ելունդներու վրայ մեծ խնայո-
ղութիւն կը կատարուի թէև, բայց ձեռնաշ-
խատութիւնները շատ ըլլալուն՝ գործադրելի
չէ, և տաշտաթաղի մասին մեր ցուցուցած
պարագաներուն մէջ միայն կարելի կ'ըլլայ

չահագործել. ինչպէս և այն տարիներու մէջ,
ուր գետնախնձորի բերքը առատ չըլլար:

Վերջապէս՝ գետնախնձորի աչքերը փո-
րելով, և տնկելով ալ կարելի կ'ըլլայ բազ-
մացնել. որով և գետնախնձորներն ալ ուտե-
լու կը պահուին. բայց վերի միւս միջոցնե-
րուն պէս անգործադրելի է, խիստ քիչ հա-
սոյթ տալուն համար:

Ղ. ԲՈՒՍ

ՇԵՐԱՍԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ

ԲԱՍԹԵՕՆԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

ՄԱԿԱԲՈՒԾԱՅԻՆ ՓՈԽԱՆՑԻԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ

Պղպեղախա (Pébrine քաբա Բաբան)

(Շաբաթաւ. 7-ի 17-ի 30)

ՓՈԽԱՆՑՈՒՄ ԵՒ ՎԱՐՍԱԿՈՒՄ. — Ման-
րէներէ յառաջ եկած այս հիւանդութեան
փոխանցիկ ըլլալու մասին, դիտնականները
տարբեր կարծիքներ ունէին, և բանավէճի
մեծ նիւթ մը դարձած էր: Առաջին անգամ
Տոքո. Օգիմօ յուզեց այս խնդիրը, և հի-
ւանդութեան փոխանցիկ ըլլալը կը պնդէր.
Ինչպէս և Մ. Ճեռա. Բոտալացի ուրիշ գի-
տնականներէ ոմանք հակառակը կը պնդէին:
Իսկ Ֆուանտացի գիտնականներէ ոմանք ա-
մսկարծիք կը գտնուէին Տոքո. Օգիմօի և
ուրիշներ ալ հակառակը կը պնդէին: Այս
վերջիներու գաղափարը սա էր թէ, փո-
տածին միջավայր մը գոյութիւն ունի ան-
պատճառ, ուր հիւանդութիւնը համաճարա-
կի մը բնութիւնը կ'առնու անձանց զգա-
ւորութիւն մը ազդեցութեան տակ, և այդ հիւան-
դութեան ուղղակի պատճառն ալ այդ ան-
ձանցն է:

Վերջապէս Մ. Բասթէօն հաստատեց թէ,
հիւանդութիւնը փոխանցիկ է, և ամէն վի-
ճաքանութիւն վերջացաւ: Ահաւասիկ Մ. Բաս-
թէօնի վարդապետութիւնը այս մասին:

Ա. ՓՈԽԱՆՑՈՒՄ ՈՒՏԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ.
— Պղպեղախտէ վարակուած թրթուրներու
թարմ աղբը ջուրի մէջ հալեցնելով, և այս
ջուրէն վրձնով մը տերեւներու վրայ քսե-
լով, առանձին սենեակի մէջ բուծուած, և
իրենց 4րդ շրջանին մէջ գտնուող առողջ թրթ-
ուրներու կերցուցին այս տերեւները, և յե-

տոյ կրկին անարատ և առողջ տերեւներ տըրուեցան թրթուրներուն . ասոնք իրենց խողակը կ'ոտայեն թէեւ , բայց կծիծներուն և թիթեռնիկներուն մէջ մանրէները այնչափ առատութեամբ կ'երեւին որ , շատ կծիծներ իրենց խողակին մէջ կը մեռնին . և երաժ թըրթուրներն ալ ճղճիմ և վատառողջ կ'ըլլան , մինչեւ իսկ զուգաւորութեան անյարմար :

Այս փորձը եթէ Գրդ չըջանէն առաջ կատարուի , թրթուրները ճիւղերուն վրայ ելլելէ առաջ կը մեռնին : Եւ հաստատուելէս ապացուցանելու համար , վերոյիշեալ փորձերը կատարուած ատեն , միեւնոյն տուփի մէջ գտնուած հունտերէն յառաջ եկած թրթուրներէն՝ նախապէս մաս մը կը վատեն , և փորձի ենթարկուած թրթուրներու միջավայրէն բոլորովին անջատ տեղ մը կը սնուցանեն , առողջ և անվարակ տերեւներով : Այսպէս , առողջ թրթուրները կը վարակուին ժամանակակից և անտավարակ թրթուրներու մարմնիկներէ . բայց եթէ այդ առողջ թրթուրներու սրուած տերեւներուն վրայ , չերամատան փոշիները տարածուած ըլլան , որոց մէջ պարունակուած գտնուին նախորդ տարուներէ մնացած և մանրէներէ վարակուն ազբի , տերեւներու , եւ այլն մնացորդներ , այն ատեն երկրորդ օրէն իսկ սկսեալ , թրթուրներուն մէջ մեծ կոտորած մը կ'ըլլայ . մինչդեռ իբր վկայ գտնուող և անջատուէն խեղճուած թըրթուրները , որոնք բացարձակապէս մաքուր և առողջ տերեւներով սնած են , յաջողութեամբ իրենց չըջանները կը բուրեն : Բայց այս վերջի պարագային մէջ , ոչ թէ պրպկախտը , այլ այս անգամ ալ փտախտն է որ երեւան կուգայ , որու մասին արդէն խօսեցանք . և կըրկին պիտի գրենք :

Ընդհանրապէս , չերամատաներու մէջ թըրթուրները կը վարակուին , ուրիշ անտավարակ թրթուրներու աւելած սննդով աղտոտած տերեւներով : Ահա այս պատճառաւ է որ խտալի կը պատուիրուի , չերամատաները մաքուր պահել , հակաճիւղ . նոյնպէս բուծման ժամանակ երբեք գետնները չաւել , այլ թայ լաթով արեւ միայն , որպէս զի փոշիները օդը ելլելով , տերեւներուն վրայ չի նստին :

Բ . ՓՈԽԱՆՑՈՒՄ ՀՊՈՒՄՈՎ . — Թրթուրները մէկմէկու քսուելով , կամ իրենց տոտիկներով մ'կպմէկ ճանկելով , տեղի կուտան վերադարձներու . և եթէ իրենց մարմինը կամ

տոտիկները մանրէներէ վարակուած են , այս կերպով միւսները կը սլաակինեն :

Գ . ԸՆԹԱՑԻԿ ԲՈՒԾՄԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՓՈՇԻՆԵՐՈՎ . — Այս միջոցին վրայ արդէն խօսեցանք վերը :

Դ . ԱՌՈՂՋՆԵՐԸ ԱՆՏԱՎԱՐԱԿՆԵՐՈՒ ՄՕՏ ԳՏՆՈՒԵԼՈՎ ԿԱՄ ԻՐԱՐ ԽԱՌՆԵԼՈՎ . — Վերջապէս , Մ . Բապթօն կ'ըսէ թէ , հիւանդութեան փոխանցիկ բնութիւն մ'ունենալը ոչ միայն անվիճելի է , այլ և իւր հետեւութիւնները բազմաշատ և անհաշուելի են . ամէն բուծման մէջ յառաջ եկած անտավարակ թիթեռնիկները անպատճառ փոխանցումով ստացած են իրենց հիւանդութիւնը . որովհետեւ՝ ամէն թրթուր եթէ իր ծնած ատեն , արդէն մարմնիկներէ վարակուած է , անպատճառ կը մեռնի հետագայ չըջաններուն մէջ , առանց թիթեռնիկ ըլլալու վիճակին հասնելու , և այնչափ շուտ՝ որչափ մարմնիկ կը պարունակէ իր մէջ : Նոյնպէս՝ ամէն թրթուր , որ ծնած ատեն մարմնիկներէ զերծ կը գտնուի , և բոլոր չըջաններուն մէջ ալ երբեք անոնցմէ չի վարակուիր , իր կատարելութեան կը հասնի ապահովապէս , և թիթեռնիկ կ'ըլլայ :

Ինչպէս ըսած ենք ուրիշ անգամներ , փոխանցումը կը կատարուի նաեւ , ուրիշ չերամատան մը փոշիներով , որոնք կը ներմուծին հոն հովերու առաջնորդութեամբ , և կամ օտար անձանց և նոյն իսկ չերամատաններու միջոցով , որոնք վարակուած չերամատանէ մը դառնալով , իրենց հագուստներուն վրայ կը կրեն հիւանդութեան մանրէները : Դիւրաւ կը հասկցուի հիմա ասկէ թէ , այս մահաբուժային հիւանդութիւնները մարմնիկ հեռուները կրնան տարածուիլ . եթէ , միեւնոյն չերամատան մէջ տարբեր տուփերէ բացուած թրթուրներէն ոմանք , եւ թէ անտավարակ են , անպատճառ առողջ եղողներն ալ կը վարակուին անոնցմէ :

Մինչեւ իսկ , շատ հեռաւոր վայրեր հիւանդութիւնը կրնայ ճարակիլ , քանի որ տնոր սերմերը օդին մէջ տարածուելով , հովի միջոցով կը ճամբորդեն : Բայց ոչ թէ այս հեռաւոր վարակումէն կը վախցուի այնչափ , որչափ մօտաւոր վարակումներէ : Ահաւասիկ թէ ինչ կ'ըսէ այս մասին Մ . Բապթօն :

«Բայց բոլոր չերամատանական կարեւոր գաւառներու մէջ , հիւանդութեան ճարակման պատճառը կը կայանայ գլխաւորապէս

մէկ քանի տեսակ հունտեր բռնելէ. թէեւ միեւնոյն անձի կողմէ պատրաստուած ալ ըլլան, բայց անոնցմէ ոմանք առողջ, և ուրիշներ ախտավարակ ըլլալով, մէկզմէկ կը վարակեն: Կուզէ՞ք սկիզբէն առողջ եղող շերամները մինչեւ վերջը առողջ պահել, անոնցմէ հունտ բռնելու համար. թրթուրները դուք անուցէք, կամ եթէ ուրիշ բուժել պիտի տաք, իսկ ապառուխեցէք անոնց որ, երբէք ձերինն հետ օտար և անծանօթ հունտեր միեւնոյն անգամ չի բուժեն նոյն շերամատան մէջ: Եւ եթէ ձեր շերամատանէն քիչ թէ շատ հեռի գտնուած շերամատաներու մէջ հիւանդութեան մասին կասկածներ ունենաք, ամէն ջանք ի գործ դրէք, ձերինները անոնցմէ չի վարակելու համար: Իմ երկարատեւ փորձերովս հաստատած եմ որ, շրջակաները, և մինչեւ իսկ մէկզմէկէ 4—5 մլթր հեռու գտնուած շերամատաներու մէջ պղպեղախոր կոտորած ըրած պահուն, մերինները ազատած են, և տուած կոտորածին գրեթէ շատ անշուն բան մ'եղած է: Հովերու միջոցով ներմուծուած և ձեր տերեւներուն վրայ տարածուած մանրէները այնչափ վտանգաւոր չեն, որչափ ձեր շերամատան մէջ գտնուած հիւանդութեան բոյները, և աւելի այս վերջիններուն ուղղորութիւն բնելու, և անոնցմէ վախճալու է: Մէկ բառով, զգուշացէք ձեր շերամատան մէջ գտնուած փոշիներէն: Մտածեցէք որ, մարմնիկներէ վարակուած թրթուրները մէկ քանի շրջաններ բոլորելէ վերջը միայն կը մեռնին. այնպէս որ, եթէ թրթուր մը իր առաջին շրջանի ընթացքին մէջ վարակուի մանրէներէ, կրնայ մինչեւ չորրորդ շրջանը թեւակոխել. և այս միջոցին մէջ, արդեօք ո՞րչափ թրթուրներ չի կրնար վարակել: Որչափ խնամք տարած ըլլաք ձեր հոստերը պատրաստելու մասին, թրթուրներու բուժման ժամանակ աչքերնիդ չորս բացէք, մանաւանդ, եթէ այդ բուժումը հունտ չինելու համար է: Երբ կը տեսնէք կասկածելի թրթուր մը, մինչեւ իսկ միւսներէն փոքր, ճղճիմ կամ տկար շարժուածքով, իսկոյն հեռացուցէք զայն ձեր շերամատանէն, այրեցէք կամ թաղեցէք քլորային կիրի (քիրէճ գայմաղը) մէջ. որովհետեւ՝ անիկա անպատճառ այս՝ կամ վերջապէ՛ս ուրիշ հիւանդութենէ մը վարակուած է, և կրնայ փոխանցել իր ախտը միւսներուն»:

Բոլոր այս վերի ըսածներէն կրնանք հետեւցնել թէ, առողջ թրթուրներէ ածուած, առողջ և մանրէներէ զերծ հունտերով կատարուած բուժման մը մէջ, անկարելի է որ թրթուրները ոչնչանան առանց արտաքին վարակման միջոցի մը, և այդ վարակումէն վերջն ալ արդէն անկարելի է նաեւ որ, կոտորածը մեծ ըլլայ:

Երբէք վարակումը չի կրնար թրթուրները արգելել ձիւզերը ելլելու այս պարագային մէջ. բայց եթէ բուժման եղանակը փոխուի, զորօրինակ, իրենց ճաշերու թիւը պակսեցնելով, շրջաններու ժամանակամիջոցը երկարի, ինչպէս և շերամատան տաքութիւնը նուազի, այն ատեն հակառակը տեղի կ'ունենայ: Ըսել է, մինչեւ իսկ, ապառողջ հունտերով կարելի կ'ըլլայ բուժումը յառաջ տանիլ, թրթուրները ճիւղերը ելլելով իրենց խոզակները չինեն և թրթուրիկի փոխուին. և այս՝ ճաշերու քանակը աւելցնելով, և յարմարագոյն տաքութեան մէջ պահելով շերամատանը: Նոյնպէս, առողջ հունտերով, ինչ որ ալ ըլլայ, յաջողութիւնը ապահով կ'ըլլայ միշտ. և եթէ այս պարագային վարակումով մէկ քանի թրթուրներ ալ մեռնին, մեծ մասամբ կրնան իւղերը ելլել: Հոս է ահաւասիկ խնդրոյն ճարտարաբանական լուծումը, և այս լուծումը բացարձակապէս ճշմարիտ է:

Ղ. ԲՈԼՍ

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՄԽՈՒԱԾ ՊՈՂՊՍՏԸ ԾԱԿԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ

Երբեմն կը պատահի որ, միտած (ջուր տրուած) պողպատ մը տուանց ջուրը առնելու ծակիւ պէտք կ'ըլլայ, զորօրինակ, դանակ, հրացանի փող, եւայլն. բայց ամենէն կարծր շաղափը (մաթկապ) անգամ անգոր կը գլուտուի այս տեսակ պարագայի մէջ:

Հետեւեալ եղանակը եթէ գործադրէք, շատ դիւրութեամբ կրնաք ծակել ոեւէ կարծր ձուլածոյ (բիք) կամ պողպատ:

Սովորականին պէս շաղափ մը պատրաստեցէք ձուլածոյ պողպատով (ինկիլիզ չէլլի, սօլուք չէլիք), տաքցուցէք ծայրը կամաց կամաց, մինչեւ որ կարմիր գոյն մ'առնու, դուրս

առէք կրակէն, մաքրեցէք վրան դտնուած աղտեղութիւնները շուտով, և անմիջապէս տաքցած ծայրը սնդիկի (ճիւլա) մէջ միտեցէք, ուրկէ վերջը պաղ ջուրի մէջ ձգելով, թողելու է որ ամբողջովին պաղի: Ահա այս կերպով պատրաստուած շաղափ մը կարող է շատ դիւրութեամբ մխուած պողպատ մը և ուրիշ կարծր մետաղներ ծակել: Պէտք ըլլալիք սնդիկը շատ չըլլալուն, ծախքն ալ չնչի՛ն կ'ըլլայ: Ծակելու ատենը եթէ քափրախառն ալքով (քեաֆիրի բուհու) թրջէք մերթ ընդ մերթ շաղափին ծայրը, աւելի դիւրութեամբ կը կատարուի գործողութիւնը. և վերջի եղանակով կրնաք, մինչեւ խի ապակիներ ալ ծակել:

* * * Հետեւեալ կերպով ալ կրնաք դիւրութեամբ ծակել ապակիները: Բեւեկին խկութեան (թիրէմէնթի բուհու) մէջ դրէք խիստ մանր ջարդուած սխտոր (չիւի մը մէջ). բերանը դոցեցէք, և մերթ ընդ մերթ շիջեցեցէք: 15 օր վերջը պարզուտէ անցուցէք (սիւզմիլ ընել): Երբ ապակի մը ծակել ուղէք, շաղափին ծայրը այս հեղուկին մէջ թաթխեցէք, և սկսեցէք ծակել, բայց մինչեւ ծակելու ատենը շարունակ թրջելու է շաղափին ծայրը այս հեղուկով:

Խիստ զօրաւոր քաղցախի մէջ, կամ աւելի աղէկը քաղցախական թթուի (acide acétique) մէջ քիչ մը պտղեղ (չապ) հալեցուցէք, և այս հեղուկով ալ շաղափը թրջելով, դիւրութեամբ կրնաք ծակել ապակիները:

* * *

Մ ԳԵՐԸ (ԳԱՋ) ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սաք, հնդկահաւ, եւ այլն պարարտացնելու համար կրնաք գործածել սուրճի միուրը (ի լֆէ), որ մանաւանդ սրճարաններու մէջ ի տ շատ կը գտնուի: Ահաւասիկ թէ ինչպէս պէտք է ընել: Մէկ օխտ միւրիին խառնեցէք 2 օխտ թեփի, և քիչ ջրով շաղաւելով խմոր մը շինեցէք, և այս խմորէն մանր և բարակ (մասի հաստութիւն, կամ քիչ մը խոշորկէ) գլաններ պատրաստեցէք երջիկի պէս, զորս պէտք է կլլել տալ պարարտացնելիք կենդանեաց: Այս սնունդը շուտով կը պարարտացնէ, և կենդանիներուն ալ հաճոյալի համ մը կուտայ:

* * *

ԿՈՏՐԱԾ ԱՊԱԿԻՆԵՐԸ ԻՐԱՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՄԱՋՏԱՔԷ

Հաւասար չափով հարալ (իչ եաղը) և ճերմակ ձիւթ (չամ տազը) ամանի մը մէջ դնելով, կրակի վրայ տաքցուցէք, մինչեւ որ վրովրի խառնուրդը. յետոյ վար առէք կրակէն, քիչ մը պտղեղէն վերջը փոխադրած կիր ցանեցէք երեսը, լաւ մը խառնեցէք, այնպէս որ կակուղ և իրարու աղէկ միացած խմոր մը ըլլայ. զոր կը քսէք իրարու միանալիք սպակիներուն:

* *

ԱՐՈՅՐԷ (ՓԻՐԻՆՃ) ԿԵՐՏՈՒԱՆԵՐԸ ՎԵՏՎԵՏԵԼ (ԵՍԼԱՊՈՒԿԼԱՄԱ)

Երկու մաս ջուրի մէջ հալեցուցէք 1 մաս պղնձի ծծմբատ (կէօղ թաղը), մէջը նետեցէք մէկ քանի կտոր երկաթի մանրուք, կամ փոքր գամեր: Այս լուծուածքին մէջ դրէք վտակցունելիք սրայրներնիւ, տաքցուցէք. յետոյ լուացէք, չորցուցէք, և երեսը շիկեցէք մեղրամոմով, կամ կարծր ջնարակ մը (վէռնի) քսեցէք:

* *

ՆԱՖԹԱՃԱՐՊԸ (vaseline) ԶՈՒՐԻ ՀԵՏ ԽԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Երբեմն՝ դեղերու պատրաստութեան համար պէտք կ'ըլլայ այս խառնուրդը: Զօռ անուն Գերմանացի դեղագործ մը խորհուրդ կուտայ սղիազաւի իւղ (հինա եաղը) քիչ մը, խառնուրդին մէջ: Բայց ֆուանսացի Տընի սը Մանեաք-Լափալ անուն դեղագործը աւելի պարզ և հանճարեղ միջոց մը ցոյց կուտայ, որ հաեւեալն է, երբ ջուրը և նաֆթաճարպը իրար խառնելու համար սանդիկ մէջ կը տրորէք փոքր քանակութեամբ փոխադրած աւաբիկ խէթ (զամբ սրէ սլի) խառնեցէք հետը:

—>—<—

ՀԱՐՑՈՒՄ ԹԻԻ 50

Արապկիրէն Հանրադիտակի գործակալ Գադիկ էֆ. Տէվէճեան հետեւալը կը գրէ մեզ:

Հանրագիտակի բաժանորդներէն մէկը կը փափաքի պատասխան մ'առնուլ Հանրագիտակէն, թէ՛

« Զիկա՞յ արդեօք ապիկ մը, գեղ մը օժում մը՝ որ հէնքին աղբը (թիրէն) դիմացկուն ընէ, գէթ վեց ամիս չի փոխու, չի կտրելու համար: Օժում մը՝ որ այնչափ չի կածրացնէ աղբին թիրէն, վասնզի՝ այս պարագային կրնայ հէնքին թելերը կտրաել »:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Այո՛ կայ, ահաւասիկ:

Աղբի թելերը կը սոսնձեն (թուլթալլամագ) ընդհանրապէս Եւրոպայի ու տաճարները հետագայ խառնուրդով, զոր կը քսեն թելերուն վրայ խողանակով կամ վրձինով մը:

Գեանախնձորի ուղայ (նիշտութա) 10 մաս
Սոսինձ (թուլթալլ) 1 »

Զուր 89 »

Դաղջ Զուրի մէջ նախ կը հալեցնեն սոսինձը կամաց կամաց, յետոյ այս սոսինձ Զուրէն մաս մը կ'առնեն, ուղան մէջը կը յարեն, եւ հետզհետէ՝ քիչ քիչ մնացեալ սոսինձ Զուրը վրան կը լեցնեն եւ ամենը իրար կը խառնեն վերջնականապէս: Եթէ անմիջական կերպով ուղան սոսինձ Զուրին մէջ լեցնենք, մասամբ կը խառնուի, իսկ մնացեալը մանր գնտակներ կազմելով Զուրին մէջ կը լողան:

Այս խառնուրդի պատրաստութիւնը թէեւ դիւրին է բայց այնչափ գոհացուցիչ չէ արդիւնքը. հետեւեալ խառնուրդը աւելի ընտրելագոյն է եւ իւր գործածութեամբ գոհ կը մնաք: Առէք՝

1. Ուղայ (ցորենի նիշտութա) 1 քիլո
այսինքն 312 թրքական աիրէմ:

2. Ձկան սոսինձ (ընտիր տեսակէն) 1 քիլո
այսինքն 312 աիրէմ:

3. Ճերմակ օճառ 0,050 կռամ
այսինքն 16 աիրէմ:

4. Ճերմակ մեղրամամ (անարատ) 0,200
կռամ այսինքն 63 աիրէմ:

5. Կալիի բնածխատ (պարզապէս բո-

թաս ըսուածն է) 0,025 կռամ
այսինքն 8 աիրէմ թրքական:

6. Զուր 60 լիթր
այսինքն 37 օխա:

Ահաւասիկ վերոյիշեալ խառնուրդին պատրաստութեան եղանակը:

Նախ Զուրին մէջ հալեցնելու է ձկան սոսինձը (պաղք թուլթալլը) կտրելի եղածին չափ կամաց կամաց: Ասիկայ ընելու համար առաջուց վերոյիշեալ չափով սոսինձին վրայ լեցնելու է 5—6 քաջի չափ պաղք կտրած կամ դաղջ Զուր եւ թողելու է որ ինքնին հալի Զուրին մէջ. (եթէ ձմեռ ատեն կաթարէք գործողութիւնը պէտք է տաքուկ տեսելի մը մէջ գնել): Մնացեալ նիւթերն ալ պէտք է զատ հալեցնել հետեւեալ կերպով:

Օճառը դանակով տաշեցէք, լեցուցէք Զուրին մէջ, աւելցուցէք վրան բոթաք, դէք մաղմաղ կրակի վրայ եւ խառնուրդին մէջ նետեցէք մեղրամամը, տաքցնելու է այն ստորձան որ մեղրամամը հալի, աւելի տաքցնել պէտք չէ. երբ ամենքը կատարելապէս հալին, այն ատեն նախապէս պատրաստած սոսինձ Զուրերնիդ վրան լեցուցէք եւ լաւ մը խառնեցէք: Երբ այսպէս պատրաստ ըլլայ խառնուրդը վերը յիշուած եղանակով քսեցէք աղբին թելերուն վրայ եւ աւելորդը առէք կակուղ վրձինով մը: Ուշագրութիւն ընելու է որ սոսինձաջուրը աղբին վրայ ամեն տեղ հաւասարապէս տարածուի, եւ ինչպէս ըսինք՝ աւելորդը առնել վրձինով մը: Այս գործողութիւնը Եւրոպայի մէջ մասնաւոր գործիքով մը կ'ըլլայ, որ ուրիշ բան չէ բայց եթէ թաւալուն խողանակ մը. այսինքն՝ կլոր փայտ մը, որով վրայ հաստատուած են խողանակներ եւ ատամնալիւ ճղուղներու (Արապկերցոց ճնճղուկ ըսածը այսինքն տիշլի չարք) միջոցաւ կը դառնայ:

Սոսնձելէն վերջը թողելու է որ ինքնին չորնայ կամաց կամաց՝ տաքուկ տեղ մը, անշուշտ ոչ արեւին մէջ եւ ոչ կրակին գիմացը, այլ Զուր տեղ մը:

Այսպէս ստանձնելով սակայն պէտք ե-
ղած տոկոսնութիւնը չէք ստանար, այլ
պէտք է ապիկել նաեւ, որպէս զի՝ մի-
եւնոյն անգամ թէ տոկոսնութիւն եւ
թէ կապիւթիւն եւ ճկունութիւն տաք
ազրի թելերուն: Ուստի՝ երբ ազրը կա-
տարելապէս չորնայ, հետեւեալ բաղա-
դրութիւնը քսեցէք վրան, որ ամենէն
աւելի գործածական եւ ընտրելագոյնն է:

Գործածուած նիւթերը պէտք է միշտ
աղէկ տեսակէ ըլլան:

Կառւածաւի իւղ (պէղիւր ետղը) 7 քիւր
500 կաւամ այսինքն 5 քաշ 350 արամ
թրքական:

Փարմարցանկ (միւրտէսէնկ) 0,700
կաւամ այսինքն 220 արամ թրքական:

Կապարի քացախաւ (քուրչուն սիւր-
քէսի) 0,400 կաւամ, այսինքն 125 արամ
թրքական:

Էսյրայի խէժ (կօմալարա) 0,900 կա.
այսինքն 280 արամ թրքական:

Բեւեկնի իսկութիւն (թիրէմէնթի
րուհը) 0,750 կաւամ, այսինքն 234 արամ:

Ստուերահոյ (օմպրա կոչուած ներկը)
ըստ հաճոյս 0,100—0,200 կաւամ, այ-
սինքն 30—60 արամ: Բաց կամ մութ
գոյն տալու համար:

Պատրաստութեան եղանակ:

Թեթեւ կրակի վրայ եփեցէք 3—4
ժամ կառւածաւի իւղը ստուերահոյին եւ
քարմարցանկին հետ: Այս վերջի երկու
նիւթերը պէտք է լեցնել թաղիքէ (քէչէ
տապրակի մը մէջ, որու բերանը գոցե-
լով, կը նետեն պարզապէս իւղին մէջ:
Ուրիշ տեղ մը հալեցնելու է կամաց կա-
մաց լայքայի խէժը եւ իւղը եփ ելլելէն
մէկ քանի վայրկեան առաջ մէջը լեցնել
եւ խառնելով կրակէն վար տանելու է:
Երբ խառնուրդը գաղջանայ (ըլլը) շա-
րունակ խառնելով հետզհետէ լեցնելու
է մէջը, բեւեկնի իսկութիւնը եւ կա-
պարի քացախաւը:

Ահա այս կերպով կ'ունենանք պատ-
ուական ապիկ մը, որ կատարելապէս
ձեր փախաբանաց գոհացում կ'ընայ տալ,
եթէ քացատրութիւնները եւ չափերը

ճշդիւ գործածէք:

Այս ապիկն ալ խողանակով կը քսեն
ազրին վրայ եւ ստանձնու գործողու-
թեան մասին արուած հրահանգներուն
համաձայն աւելորդները առնելէն վերջը
թողելու է որ ինքնին կամաց կամաց
չորնայ տաք տեղ մը գնելով: Եթէ ան-
հողութեամբ պաղ տեղ գնէք, ազրին
թելերը կը կարծրանան եւ ամենափոքր
սարսումով կը փրթին: Երկրորդ՝ չորնա-
լը որչափ դանդաղ ըլլայ (միշտ տաք
տեղ), ազրը այնչափ կակուղ եւ ճկուն
կ'ըլլայ:

Թէեւ անյաջող պարտոյի մը մէջ
ազրը ճարպով մակօծելով, կարծրութիւ-
նը կը դարմանուի քիչ շատ, բայց եր-
բէք կատարելապէս գոհացում չի կ'ընար
տալ: Ուստի պէտք է աւելի խնամք (եւ
ուշադրութիւն ընել ապիկած տաննիդ:
Մէկ երկու փորձէ ետքը կատարեալ յա-
ջողութիւն կ'ընար ձեռք բերել. այս
պատճառաւ փորձը կատարեցէք նախ
անդործածելի ազրերու վրայ: Վերջիչ-
եալ քանակութիւնները ընդարձակ ձե-
ռակերտարաններու (մանիֆաթիւ) հա-
մար է. ձեղի պէտք եղած քանակու-
թիւնը հաշուելով կ'ընար գտնել:

Պ. ԲՈՒԱՏ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ՀԱՐՑՈՒՄ ԹԻԻ 49

Հանրազիտակի Ռուսճուքի բաժանորդ-
ներէն, Լեւոն Էֆ. Սարաֆեան հետեւեալ
հարցումը ուղղած է: «Անուշները չորրորտե-
լու եւ չաքարտեղու (բիրեղանալ) համար
ի՞նչ ընելու է: Ահա առիկ պատասխանը:

Նախ եւ առաջ պէտք է ուշադրութեան
առնել թէ՝ ամեն անդեղէն նիւթեր, որոնք
անշուշտ յօրինուած ային մարմիններէ (մազիէ-
օսկանիք) կազմուած են, եւ հետեւաբար
խմորելու նեխելու կամ բորբոսելու արտա-
դիր, եւ ինչպէս կը տեսնենք, թերթիւ խմ-
բագրութեան կողմէ անդեղէն նիւթերը եր-
կար առնեն անվթար պահելու մասին գրուած

ճարտարարուեստական յօդուածներուն մէջ թէ ասոնց աւրուելուն պատճառը, կարգ մը անհունապէս փոքրիկ արարածներ են, որոնց գիտական լեզուով մանրէ կը գրուցեն, եւ թէ այդ խմբները արգիլելու համար՝ պէտք է նախ՝ այդ մանրէներունը ոչնչացնել, եւ անդէպէնները լաւ գոցուած ամաններու մէջ պահել, որպէսզի նորանոր մանրէներունը՝ ասոնց վրայ տարածուելով՝ կրկին խմբում յառաջի բերեն: Ասոնցմէ զատ կրնաք նաեւ հակաանխիջ նիւթեր գործածել:

Այս երկու միջոցներն ալ օգտակարապէս կրնանք գործածել անուշեղէններու պահպանման համար:

Ամէն պտուղէ հաւատարապէս աղէկ տնուշ չի պատրաստուիր, եւ ասոնց հասունութեան աստիճանն ալ մեծ դեր կը խաղայ. ոչ խալ ըլլալու են եւ ոչ ալ շատ անցած: Անուշի պատրաստութեան սահմանուած պըտուղ կամ ծաղիկ, ասաջուց պէտք է լաւ մաքրել, եւ եթէ մէջերին ճգնուած կամ աւրուածներ կան ուշադրութեամբ զտուելու է:

Իբր ընդհանուր օրէնք, անուշեղէնները պէտք է՝ պատրաստել առանց անագի պղնձէ տաներու մէջ, եւ եփելէն վերջ տաք տաք ամաններու մէջ լեցնել: Երկու տեսակ աման կը գործածուի, մին երկաթեայ անագադոծ թիթեղէ (թէնէքէ) տուփեր, որոց պատրաստութեան մասին, թերթիս խմբագրութեան կողմէ գրուած ճարտարարուեստական յօդուածներու մէջ մանրամասնօրէն բացատրուած է: Երկրորդ՝ ապակեայ ամաններ, բլուղ (քալանօղ) սկահակ (քետոն) եւայլն:

Անուշները ասոնց մէջ ալ պէտք է տաք տաք լեցնել, բերնէն միշտ մէկ հարիւրը մեթր. վար սկահակներուն մէջ, իսկ բլուղներուն մէջ մինչեւ պարանոցը: Բայց որովհետեւ անուշները տաք տաք ապակեայ ամաններուն մէջ լեցուած ատեն, այս վերջինները բարեխառնութեան յանկարծական փոփոխման պատճառաւ կը ճաթին. անոր հանոր համար պէտք է ապակեայ ամանները ջրով լեցուն ամանի մը մէջ դնել, եւ տաք-ցընել մինչեւ եռալու աստիճան, եւ ան միջոցին որ անուշը պատրաստուած է կրակէն վար տանել, եւ այս կերպով տաքցած բլուղներուն կամ սկահակներուն մէջ լեցնել: Թողուցք այսպէս ջուրին մէջ մինչեւ որ ինքնին պաղին:

Իւրաքանչիւր ապակեայ ամանի ճիշդ բերնին կըրուածեան մեծութիւնով՝ կըր թուղթեր կտրեցէք, այս թուղթերը եթէ գեղազարմերու գործածած պարզուած թուղթէն ըլլայ, աւելի աղէկ կ'ըլլայ:

Գիտնալով որ ալբոլը զօրաւոր հակաանխիջ մ'է, եւ յօրինուածային մարմինները ընդ երկար անվթար կրնայ պահել, իբր հակաանխիջ անուշները պահպանելու համար, կը գործածեն առհասարակ Եւրպայի տնուշադործները:

Կտրուած կըր թուղթերը զուտ եւ զօրաւոր ալբոլի մէջ թաթ խեցէք, կաթկթցուցէք առանց չորցնելու սակայն, եւ զետեղեցէք ճիշդ անուշներուն վրայ: Եւ բերանը դոյնեցէք անվթապէս երկրորդ թղթով մը, աւելի խոշոր եւ երկու երեք անգամ կտրուած վրայ ծալուած, որուն եզերքները գէպ ի վար դարձնելով՝ հաստըկէկ դերձանով մը կապեցէք:

Այս վերջի թուղթը պէտք է ըլլայ վայելուն տեսակէ, որպէսզի օդը ներս չի թափանցէ: Ալբոլի մէջ թաթ խառած կըր թուղթը գիւրուածեամբ հանել դնելու համար, կտրած ատենինիւ, մէկ կողմէն բռնելու տեղ մը թուղեցէք եւ անուշին վրայ գետեղած ատենինիւ գէպ ի վեր դարձուցէք այդ մասը:

Այս կերպով ալբոլը շոգիանալով անուշներուն վրայ ալբոլային մթնոլորտ մը կը կազմէ եւ օդի միջոցաւ ներս մտնել ազդ մանրէները կ'ոչնչացնէ: Բայց եթէ գործածած ալբոլինիւ աղէկ չըլլայ, եւ կամ եթէ բերանը լաւ գոցած չըլլաք եւ պահած անվերնիւ պ խոնաւ ըլլայ, անպատճառ բորբոսում կը գոյանայ:

Այս տեսակ պարագաներու մէջ 1—2 անգամ անգամ մը բլուղներուն բերանը բանալով՝ թուղթերը հանելու, ալբոլի մէջ թաթ խեցով կրկին գետեղելու եւ պոյելու է:

Բորբոսումը յառաջ կուգայ նաեւ հետեւեալ պարագային մէջ երբ անուշին թանձրութիւնը (խմամ) կատարեալ չէ, կը բորբոսի, իսկ եթէ թանձրութիւնը անցած ըլլայ կը բլուրեղանայ (չեքիլէնիւ կ'ըլլայ):

Թէ լոնչակս պէտք է անուշներուն թանձրութիւնը հասկնալ, գիմեցէք Հանրագիտական նախորդ թիւերուն, որոյ մէջ մանրամասնօրէն բացատրուած է:

ՅՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԱՆԻՍԱ. — Օր. Ե. Սաղաթիւ. — Նամակնիդ եւ բաժնեգիննիդ ստացած ենք. շնորհակալութիւն. Պալենց գրատուն դրամն ալ տրուած է:

ՄԱՆԻՍԱ. — Գ. Կ. Ունճեան էֆ. — Նամակնիդ եւ յօդուածնիդ ստացած ենք. ի մօտոյ կը հրատարակենք:

ՍԵՐԱՍՏԻԱ. — Յ. Գարակէօզեան էֆ. — Ձեր թղթաբարտերը ստացած ենք, պահաս թիւերը արդէն խրկած ենք. Եկթիմեան էֆ. ի գիտական խնդիրներու լուծումները ճիշդ են, իսկ վայելչազարդութեան բաժինը կը ղրկենք, երբ հրատարակելու սկսինք:

ՊԱՐՏԻԶԱԿ. — Նշան էֆ. Փալազեան. — Վայելչազարդութեան բաժինին ստիպեալ չէք բաժանորդագրուելու. ուշի ուշով կարդացէք մեր յայտարարութիւնը: Կենդանաբանական եւ բուսաբանական նիւթերու վրայ ալ ինչպէս մերթ ընդ մերթ, նոյնպէս այսուհետեւ երբեմն պիտի գրենք, բայց ոչ միշտ, որովհետեւ միմիայն մէկ բաժանորդի մը համար կարելի չ'է միշտ միեւնոյն նիւթերով գրադիլ:

ՀԱԼԷՊ. — Տիկին Մ. Օ. Մազլմեան. — Ստացած ենք նամակնիդ եւ շնորհակալութեամբ բաժանորդ արձանագրած ենք զՁեզ:

ԱՅՏԸՆ. — Օր. Զ. Եսգըճեան. — Նոյնպէս:

ՍԻԼՎԻՐԻ. — Օր. Զ. Մուրադեան. — Նոյնպէս:

ԱՐԱՊԿԻՐ. — Գ. Տէվէճեան էֆ. — Շնորհակալութեամբ ստացանք Ձեր յօդուածները, եւ 100 դահեկանի փոխ-գիրք, զոր գանձած ենք:

ՈՒՍԴԻՐԻ ՀԱՅ. ԳՐԱԴԱՐԱՆ. — Ստացած ենք Ձեր բաժնեգինը: շնորհակալութիւն:

* * *

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑՆԵՐ

Վայելչազարդութեան բաժնին համար արձանագրուող բաժանորդաց թիւը հետզհետէ աւելնալու վրայ է, կը խնդրուի արագոյ հասարակութենէն որ փութան ժամ առաջ արձանագրութեան ցանկը լեցնել, եթէ կը փա-

րաքին այս օգտակար ձեռնարկը քաջալերելով քիչ տակնէն հրատարակուած տեսնել:

Պայմանները գրուած է թերթիս կողքին Յրդ. երեսին մէջ:

* * *

Ա. Զ. Գ.

Կը խնդրուի Հանրագիտակի յարգոյ բաժանորդներէն, որպէս զի բարեհաճին ընդ փոյթ յետամնաց բաժնեգիններն ղրկել մեզի, ինչպէս եւ նորերն:

Այն գաւառներու մէջ որ գործակալ չունինք, պէտք է բաժանորդներն իրենց վճարումները կատարեն ուղղակի խմբագրութեան հասցէին ԱՆՅԱՊԱՂ:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Թղթալաճառ Վրոյր էֆ. երկրորդ վեցամսէն սկսեալ մէկ օրինակ Հանրագիտակ կը նուիրէ Վանայ Որբանոցին:

Նոյնպէս Սեդրաք էֆ. Ծովիկեան երկրորդ վեցամսէն սկսեալ մէկ օրինակ Հանրագիտակ կը նուիրէ Տիվրիկի Աղզ Վարժարանին:

Շնորհակալութիւն իրենց ազնիւ զգացումներուն:

Ատաբաղարէն Կ. Սէմիդեան էֆ. կարգ մը մեքենագիտական հարցումներ ուղղած է մեզ, զորս պիտի հրատարակենք յառաջիկայ թուով:

Հանրագիտակի դադարման առթիւ պակաս թիւերը պիտի տանք յառաջիկային մեր յարգոյ բաժանորդաց: Ինչպէս մենք կուզենք մեր պարտքը ճանշնալ, նոյնը կը խնդրուի նաեւ թերթիս հետ առնչութիւն ունեցող անձնաւորութիւններէ:

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



ՀԱՃՈՅՔ ՍԸ

ՈՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՌԷ

Ճշմարիտ հաճոյքն այն է որ, ախորժելի ժամանց մը ընծայելով հանդերձ, առողջութեան ալ մեծապէս կ'օգնէ: Ներկայ դարուս մէջ հաճոյքի նիւթերը բազմաթիւ են. սակայն զարգացած ազգեր ամենէն աւելի թիջին նախապատուութիւն կուտան, անոր համար որ, այս թանկագին ընկելին ամենածանր յոգնութիւնները չուտով կ'անցնէ և նոր կորով կը ներշնչէ, մարդուս ձգած աշխատութիւնը վերականգնու: Զմեռը արիւնք տաքցնելով, մարմինը ցուրտից դէմ կը պաշտպանէ՝ ամառն ալ զգոյց թիւն ընծայելով, շատ մը հիւանդութեան տուած քրքումն է: Խնամով պատրաստուած գաւաթ մը թէյը, նոյնչափ մսի փուրէ հաշտուող ամառը կը պարունակէ և իր անբնորոշութեամբ թիւն մը կ'առաջարկէ նախախնամութեան մըն է մարդկութեան համար: Սակայն աւագ որ թիջ անուամբ ծախուածներու մեծագոյն մասը խորագախուած ըլլալով, զուրկ են այս առաւելութիւններէն և զանոնք ճանչնալն շատ դժուար է, ուստի անոնք որ կը փախաբին ԸՆՏԻՐ ԱՆՆԱՐԴԱՆ և միւսնոյն տոտեն ԱՌԱՆ ԹԷՅ ԽՈՒՆԷ, պէտք է Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿԵՐՑ ԹԷՅԵՐԸ գործածեն. ուշադրութեամբ փնտռելով անոնց անունն ու մասնաւորը տուիւրու վրայ: Որովհետեւ թէյն այս մեծ վտանգաւորն է, իւր երկարամեայ փորձառութեամբ, արեւելեան երկիրներէ մեծաքանակ թէյ արտածելուն և ահագին ասպրանքներ սպառելուն ջնորհիւ, միշտ անխաբար թէյ կը ծախէ ԱՆՍՐՑԵԼԻ գինեւորով: Ընկերութեան Կեդրոնաւորին է Կ. Պոլիս, ճէլալ Պէյ Խոտն, թիւ 10:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ կը ծանուցանէ թէ Մանկավարժական Բերականուրթեան Գ. մասը տպագրութեան յանձնուած է:

Մայրթերաչափ Սիւթէմի Գաղղիէ-րէն մասի ԺԱ. տետրը հրատարակուած է և բաժանորդագրութիւնը փակուած է:
Գին 12 տետրերու 25 դրուշ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոքտոյ եւ Գաւառաց հաւաք	
Հանրագիտակ տարեկան	50 դր.
» Վայելչազարդութեան բաժինով	80 »
Հանրագիտակ միայն Վայելչազարդութեան բաժին	60 »
Հանրագիտակ Վայելչազարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	110 »

Արտասահմանի հաւաք

Հանրագիտակ տարեկան	15 ֆր.
» Վայելչազարդութեան բաժինով	20 »
Հանրագիտակ միայն Վայելչազարդութեան բաժին	16 »
Հանրագիտակ Վայելչազարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	25 »

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՎԱՅԵԼՉԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԵՆ

Դ. ԲՈՒՍ

ԽՆՔԱԳՐԱՅԵՏ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ՀԱՆԴԵՍԻ

Թիւ 19 Էսկի-Չապիէ

Կ. Պոլիս

Տէ՛ր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը, հաճեցէք զիս բաժանորդ արձանագրել թերթիդ Վայելչազարդութեան բաժինն և

1898

ՍԻՆԻՍԵՆԷ
(Ընթերցող)

Բնակութեան տեղ
Հասցէ

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Կը խնդրուի թերթիս հետ առնչութիւն ունեցող ամեն անձերէ (գործակալ, բաժանորդ, ևն.) որ բարեհաճին իրենց թղթակցութիւնները ուղղել հետեւեալ հասցէին, ԱՌԱՅ ՈՒՐԻՇ ՈՒ ԵՒ Է ՄԻՋ-ՆՈՐԴԻ. հակառակ պարագային, եթէ անպատեհութիւններ տեղի ունենան, ամեն գանգատ անյետքի մնալով, պատասխանատու չենք ըլլար:

درعليه ده بفتح قوسنده اسكي ضبطه ده
صوباجي پارسغ افدينك ۱۹ نومروى دكاننده
«مجموعه علوم» غزته سى سر محررى (بولاد) افدى يه

Ղ Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ
«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Ջապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,"
Chez M. Parsegh Hazarossian
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

ՄԵՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

4. ՊՈԼԻՍ ՖԵՏԷԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատունը արտորատ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ դեղորայք. վերաբուժական գործիքներ, Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, դոնականեր, գինիներ և հանրային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը զրկեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ասա-բալար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիւր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրգրում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կ. Կտաւճեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէլիչեան
Թրեպոլի — Գալուստ էֆ. Գրլըճեան
Սինոպ — Յ. էֆ. Պետրոսեան

Կիրասուն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
Մարաւ — Արթ. Տ. Յովհաննէս քահանայ
Վարժապետեան
Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Պանսքումա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Սըլլազ. — Յ. էֆ. Գարակէօզեան
Տրապզուն. — Սահակ էֆ. Էթմէքճեան
Կէլիպօլու. — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանիսա. — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆիոն-Գարա-Հիսար. — Արտաէֆ էֆ Հալապեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մադրի-Գիւղ, Պօլոս էֆ. Ազնաւորեանի խանութը,
Դատը. Գիւղ, Լեւոն էֆ. Չպուքճեան Դեղարանը,
Բերա, Մեծ փողոց Դառնիկ էֆ. Կիւլէքեանի խանութը: